հռ]չակաւոր յոյն եւ ասորի մինչեւ Հայրերն ալ (Կիւրեղ աղեքսանդրացի, Ոսկեբերան, Եփրեմ) անտեղեակ ըլլալով եբրայեցերէնի՝ Մասորական բնագրին վրայ յէն կանուխ կատարուած աւելի կամ նուազ յաջող թարգմանութիւններէն կ'օգտուէին ընդհանրապէս՝ Եօթանասնից բնագիրին այս կամ այն մթութիւնները պարզելու համար։

Ինչպէս քիչ առաջ չեշտեցինք, չուզելով մեր ուշադրութենէն վրիպեցնել այն մասնաւոր երեւոյթը՝ ըստ որում Եօթանասնիցով մեզի հրամցուած եբրայական քանի մը բառեր իրենց հայերէնովը նշանակուած կը գտնենք մեր Աստուածաշունչին մէջ, պիտի փորձենք նկատի առնել այդ կէտը ու բացատրել զայն, որչափ կարելի է, քանի մը օրինակներով։

Ե. Ե. Դ.

# ՄԱՆԴԱԿՈՒՆԻԻ ՃԱՌԵՐՈՒՆ ՄԷԿ ՆՈՐ ՁԵՌԱԳԻՐԸ

(Տես. ՍԻՈՆ, Գ. Տարի Թիւ 2-3. 65 էջ)

| | Տպագիրը | Ձեռագիրը |
|---|---|---|
| էջ 195 տ. 36-37 | այլ դիւթի և ուռթոյ զօրութիւն ոչ լինի. այլ եթէ տեսանես ի յանկարծ . . . | այլ դիւթի և յուռթոյ զօրութեամբ ոչ ինչ լինի. այլ թէ տեսանիցես յանկարծ . . . |
| » 197 » 9 | չփմունք | չփոթմունք |
| » — » 29-34 | Իբրեւ միասակար է շաբաթն և չորեքշաբաթն. զի սոքա անուամբ Քրիստոսի միայն են քրիստոնեայք, և անուն ինչ նորոգել եւ եղծանել ոչ կարէ առանց լուսոյ և տօթոյ. և լոյսն և տօթն յարեգակնէ է, և արեգակնն ոչ եթէ յաւուրս չորեքշաբաթին և ի շաբաթուն այլ ինչ ծագումն է . . . | Իբրեւ միաս է շաբաթն և չորեքշաբաթին, զի սոքա անուանք միայն են աւուրցն, և անուն ինչ նորոգել և եղծանել ոչ (կ–ր) կարէ առանց լուսոյ և տաւթոյ և աւդոյ. և լոյսն և տաւթն արեգական է, և արեգական ո՛չ թէ յաւուրս չորեքշաբաթին և շաբաթին այլ ինչ ծագումն է . . . |
| » — » 39 | ով յիմարդ խորողադիւթ | ով յիմար խորող առ դիւթդ |
| » 198 » 21 | ցամաքեցուցանել և սնացուցանել | ցամաքեցուցանել և սնուցանել |
| » — » 24 | և ի գոյանէ թէ որ պակաս դըտանի | և ի գոյանէ թէ մի պակաս գտանի |
| » 199 » 15 | տեսանեմք զամենայն ինչ եղծեալ ի յաւուրս խորոցն | տեսանեմ զամենայն ինչ եղեալ յաւուրս խորոցն. |
| » — » 21-22 | ի խամրայութենէ անձրեւաց լինին, և ի տօթոյ արեգական, և ոչ կուսելոյ օդոյ. | ի խոնաւութենէ անձրեւոյ լինի և ի տաւթոյ արեգական, և ի յաւդոց. |
| » — » 23 | և ոչ եթէ ի տօթութիւն | և ոչ տաւթութիւն |
| » — » 30 | զգլխճութիւն հովոյն | զգլխճութիւն հողոյն |
| » 200 » 9 | արդ համարեաց և լինիցի այդպէս. | արդ համարեաց թէ լինիցի այդպէս. |
| » 201 » 33-34 | Արդ տէր ոչ է այն պատրանացն պարտապան | Արդ տէր ոչ է այնմ պարտապան |
| » — » 35-36 | փոխանակ պատրանացն լինել հա- | փոխանակ հաւատալոյ նորա պատ- |

digitised by A.R.A.R.@

| | | | |
|---|---|---|---|
| | | ւատալոյ Նոցա սուրբ մարգա-րէիցն։ | բանայ սուտ մարգարէիցն։ |
| » 202 » | 4 | և ի գլուացոյց գլտից սուտ նըշ-խարայ | և ի գլուայոյց գլուտից սուտ նըշ-խարայ |
| » — » | 32-33 | զի լաւ է . . . ոքանչիլիս առնիցեն | Զանց առ տողերը |
| » — » | 35 | ճշմարիտ ցասմամբք | ճշմարիտ ցուցմամբք |
| » — » | 37-38 | եղոյց առ Երեմիա մարգարէին, առ Մովսէսիւ Յանէս, առ Պետ-րոսիւ Սիմոն | եղոյց առ Երեմիաիւ ([illegible]) «Սեդ[եկ]իա, առ Մովսեսիւ Յանէս, առ Պետրոսիւ» Սիմոն |
| » 203 » | 15-17 | Զի աղօթք գհնոցն չիջուցին, պաուիծան սանձեցին . . . զծովն հերձին և զմոռովուրդն ապրեցու-ցին | Մեր Զ. ձեռագրում կը կարդ. «զմոռո-վուրդն ապրեցուցին, զծովն հեր-ձին». [illegible] . . . պաուիծն սանձեցին . . . զծովն հերձին և զմո-ղովուրդն ապրեցուցին։ — [illegible] «Եղբարք, մի մեղայք. յեղբարցն մեկ մի սատանայի արինակ եղաւ, զնա խայրեաց ([illegible]) խալաստ»։ |
| » — » | 22 | Յիշեա վասն զի փոքր կարծեցու-ցանելոց . . . | Յիշեա զի վասն փոքր կարծեցու-ցանելոյ . . . |
| » — » | 24 | վասն փոքր կարծելոյն Բամայ զա-մօթ հօրն յայտնեալ . . . | վասն փոքր կարծեցուցանելոյ Բա-մա զամօթն հաւր իւրոյ՝ յան-գեալ(!) . . . |
| » — » | 26-27 | վասն փոքր կարծելոյն Եսաւայ . . . ոչ եգիտ. | Զանց առ տողերը |
| » — » | 32 | քան և երեք հազար արանց | քան և չորք հազար արանց |
| » — » | 37 | ընդ թուով առնել | ընդ թխով արկանել |
| » — » | 39 | վասն փոքր կարծելոյ Սափիրայ ստելոյն և Անանիայ . . . | վասն փոքր կարծել ստելն՝ Սափի-րա և Անանիայ . . . |
| » 204 » | 17 | ոչ է հարկաւորել | ոչ է հարկաւորեալ |
| » — » | 18 | զգրեալս | գրեալ |
| » — » | 33 | վասն պոռնկութեան որ անկան . . . | վասն պոռնկութեան անկան . . . |
| » 205 » | 4 | չյաջողութիւնք անասնոց | անյաջողութիւնք անասնոց |
| » — » | 5 | զրկանք է զօղոց | զրկանք ի զօղոց |
| » — » | 10 | և կոյ և ցեխ և այլ մարդոյ առ-եալ բերեմք | և կոյ և ցիխ և այլ մարդոյ քե-րէաք(?) |
| » — » | 20 | անհնարին է, ամբարշտութիւն է, | անհնարին ամպարշտութիւն է. |
| » — » | 24 | անկատարումն էր | անկատար էր |
| » — » | 32 | խոտորի | խոտորեցուցանէ |
| » — » | 39 | . . . եթէ մարդ ընդ հրամանս վարի | եթէ մարդ ընդ հրամանաւ վարի |
| » 206 » | 1 | և գործէ։ Եթէ այդպէս է . . . | և կարծի՝ եթէ այդ այդպէս է . . . |
| » — » | 7 | իւրով կամաւ | իւրաւք կամաւք |
| » — » | 8-9 | ապա թէ որ պիղծ այր սպանա-նիցէ, կամ նաւ սկեսուրս . . . | ապա թէ որդի զհայր սպանանի-ցէ, և հարսն զսկեսուր . . . |
| » — » | 15 | այլ արարածս . . . | այլ արար Ա՟ծ զամենայն . . . |
| » — » | 20 | զինչկամարար նմին, | զինչկամարար, |

digitised by A.R.A.R.@

| | | | |
|---|---|---|---|
| » — » | 29 | կարող և կատարիչ . . . | կամեցող է և կատարիչ |
| » — » | 31-32 | Բանից առ է խօսք թէ կամեսջիք և լուիջիք ինձ։ (Հոս յանկարծ կը վեր-ջանայ ճառը)։ | Մեր Գ. կը շարունակէ |

. . . զբարութիւնս երկրի կերիջիք։ Ապա թէ ոչ կամիցիք, սուր կերիցէ զձեզ։ Արդ՝ ո՛չ է ի հրամանէն. այլ ի կամաց ապստամբ առնէ. բայց առաջին հրամանն կարծեցուցանէ մեզ զգործ եւ զանկեայն իմն, զի զմեղսն ակամայ համարեսցուք գործել, եւ անհոգ եղիցուք, եւ չարաչար պատժեսցուք։ Այլ մեք ոչ եմք հրամանաց ծառայք. բայց անձնիշխան կամաւք եմք մեղացն նմանողք եմք՝ մեղաց ծառայք եմք։ Տե՛ս ո՛րպէս Պաւղոսն ասէ՝ եթէ Ում ետուք զանձինս ի ծառայութիւն հնազանդութեան, եթէ մեղաց եւ եթէ արդարութեան։ Այլ եւ ստեղծ զմեզ մարդ կենդանի, խօսուն եւ բանաւոր արար զմեզ, ի վարդ գեղեցկութեան զարդարեաց ըզմեզ. դիմաւք, աչաւք, յաւդիւք, ոտիւք, ձեռաւք, լնդեամբ, ոսկերաւք, ջղաւք, երակաւք եւ անհնարին զարդուցեամբ մարմնոյ, եւ ոչ համարեցաւ զայս միայն բաւական, այլ եւ զերկինս ձգեաց վրան իւր եւ զերկիր հիմնեցոյց, զարեգակն ծագեաց, զլուսինն լուսաւորեաց, զաստեղս պայծառացոյց, զաւդս շնչեաց, զաղբիւրս բղխեաց, զգետս խաղացոյց, զծով ամփոփեաց, զանձրեւս առաքեաց, զերկիր պտղաբերեաց զանազան եւ անուշահամ պտղովք, զի զմեզ փափկեցուսցէ կերակրովք եւ ըմպելեաւք, անասնովք, զազանովք, թռչնովք, ձկամբք ծովու եւ ազգի ազգի շնորհաւքն աշխարհիս։ Եւ դու յիմարեցար, յանցեար եւ վիրաւորեցար. արդ եւ հայհոյութիւնս եւս առաւել յիշեցեր։ Պարգեւաց կեանս անմահս, փառս ընդ հրեշտակս, երջանկութիւն՝ որդեգրութիւն, եւ ժառանգակից իւր իսկ արար զմեզ։ Արդ՝ յետ այսչափ բարութեանց զայնպիսի զփառս եւ զպարգեւս եւ զերախտաւոր տէրն բարկացուցանեմք, եւ զմեծ շնորհսն որ առ մեզ դիւրաց եւ վրիպաց մոռացանեմք։ Արդ ազատեցաք ի դիւական հրամանացն՝ այլ մի եւս յիշեսցուք, խնդրի առ մեզ մարգարէն՝ թէ Տէր զծառայութիւն իւր. եւ պարտի՝ թէ Մի յիշէք զառաջինն եւ ըզհինն մի աճէք զմտաւ. պարտի՝ թէ Ոչ յիշեցից զանաւրէնս նոցա ի շրթունս իմ։ Ահա ասէ, Մի յիշէք զառաջինն զի անցին եւ նոր գործեմ. զոր եւ գործեցի իսկ. փոխանակ որոշութեանց չինել որդւոյն արքայութիւն, փոխանակ զոհիցն եւ պատարագացն զգաղտնութիւնս տնանգաց, փոխանակ ողջակիզացն եւ տարեկանացն զամենայն մեր մաքրեցաւ, փոխանակ քրիստոսութեանն միրոնութիւն ընկալաք, փոխանակ բաղարջին զմարմինն Քրիստոսի, փոխանակ զաւազանին զխաչն, փոխանակ խորանին զեկեղեցի, փոխանակ աւրինացն շնորհք, փոխանակ Սինէի Սիոն, փոխանակ Մովսէսի Քրիստոս, փոխանակ հնագոյն չարչարանաց երկնից արքայութիւն։ Արդ անուանեալքս Քրիստոնեայք եւ անուանակիցքս Քրիստոսի, զհինն մի յիշեսցուք, այլ փախիցուք ի կռւոց նորաձեւ եւ յանկեալ դիւական հրամանաց եւ ի սուտ մարգարէից եւ մարտիրոսաց, նոր եւ յերագասոր պատուիրանաց եւ ի նմանից եւ ի խորոց, զի անպարտութիւն է Աստուծոյ եւ կցորդ կատարելութեան, զի զպատիւ իշխանութեան Աստուծոյ առնու եւ նորէն առնուլ հնարից եւ կատարէ զարքայութիւն ամենայնի։ Արդ՝ անկեալն որ զձայն հանեալ եւ զգործ անձին ի ծնունդս ի նմանութիւնս խորհի, եւ ի յոյսս եւ ի նմանս մեռեալ՝ չարաչար մեռանել եղանի ցուցանէ յուրբեն, զի աստուածացուցանէ զանուանս չարաչարացն եւ չարացն, մեռոր եւ արարիչ կարծեցուցանէ, եւ Աստուծոյ աստուածս նախատակս կացուցանէ եւ հայհոյութիւնս բազումս առնէ, եւ բազումք եղեն մոլորեալ, եւ մեք ոչ պարտիմք զնոսա քրիստոնեայս անուանել՝ այլ ընդ հեթանոս եւ ընդ հերձուածողս եւ ընդ աստուածամարտս համարել, զի ի նոյն զենեալ պատժարանն եւ մեան ընդ անմահս ունին. յորժամ եւ զմեզ փրկեսցէ շնորհ(աւ)ք եւ ողորմութեամբ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, որում փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՎԵՐՋ — Ե. Ե. Դ.

---

## ՎՐԻՊԱԿ

Սիոնի Ա. Թւոյն Թաղուածներ յօդուածին մէջ ուղղել հետեւեալ վրիպակները։

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| էջ | 21 | ա. | սիւն. | վերէն | տող | 2. | տարիներու | պէտք | է ըլլայ | հատորներու |
| » | 23 | » | » | վարէն | » | 15. | Ջաղուղոնի | » | » » | Ջաբուղոնի |
| » | 25 | բ. | » | » | » | 4. | Թարգմանութիւնն | » | » » | Թարգմանութիւնն է |
| » | » | » | » | » | » | 19. | ան՝ որ | » | » » | անոր՝ |

digitised by A.R.A.R.@